ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ՆՈՒՐԲԵԿՅԱՆ Լ. Զ.

Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը (1863 թ.) հայ իրավաքաղաքական մտքի բացառիկ հուշարձաններից է, որն առաջին հերթին արժևորվում է որպես ազգային ինքնակառավարման կազմակերպման, ամրապնդման և իրականացման իրավական ձև:

Ազգային սահմանադրությամբ օրենսդիր իշխանություն հանդիսացող Ազգային ընդհանուր ժողովի հոգևոր գործառույթներից էին Կ.Պոլսի պատրիարքի, Կրոնական ժողովի և նրանց կողմից ձևավորված մարմինների գործունեության վերահսկողությունը, ազգային-հոգևոր մարմինների գործունեության կանոնակարգումը, Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունների մասնակցությունը, Երուսաղեմի միաբանության, Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսությունների շուրջն ստեղծված խնդիրների լուծման փորձերը:

Ազգային ինքնակառավարման համակարգում ուրույն տեղ էր զբաղեցնում պատրիարքը, որն Ազգային ժողովի նախագահն էր, գործադիր իշխանության գլուխը և միջնորդը հայության և օսմանյան պետության միջև[1]: Պատրիարքի պարտականությունն էր գործել սահմանադրության սկզբունքներին համապատասխան և հսկել նրա բոլոր հոդվածների ճշգրիտ գործադրմանը: Ազգային ժողովի ատենագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ազգային ժողովի օրակարգում հայտնված խնդիրների հասարակական հնչեղությունը որոշ դեպքերում պայմանավորված է եղել ոչ միայն ժամանակի քաղաքական զարգացումներով, այլև Կ. Պոլսի պատրիարքների անձնական հատկություններով, Բ. Դռան նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքով:

Արևմտահայության համար կենսական հարցերը հիմնականում բարձրացվել են Մկրտիչ Խրիմյանի և Ներսես Վարժապետյանի պատրիարքության շրջանում: Մասնավորապես Մ. Խրիմյանի պատրիարքության ժամանակ (1869-1873 թթ.) Ազգային ժողովի օրակարգում դրվում են սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու, գավառական հարստահարությունների, ինչպես նաև Կիլի- կիայի և Աղթամարի կաթողիկոսությունների, Երուսաղեմի միաբանության հարցերը: Ազգային վարչությունը կազմում է նաև այսպես կոչված «Սահմանադրական հրահանգը» փաստաթուղթը, որով որոշակիություն էր մտցվում գավառական ընդհանուր ժողովների, գավառական վարչության, թաղական խորհուրդների կազմության ձևերի մեջ, ինչպես և տեղական օսմանյան իշխանությունների հետ առաջնորդների և գավառական ժողովների հարաբերությունների ընթացակարգում[2]:

---

[1] *Տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1863, էջ 13:*

[2] *Տե՛ս Հրահանգ յարաբերութեան առաջնորդաց եւ գաւառական վարչութեանց ընդ տեղական կառավարութեան, Կ. Պոլիս, 1873, էջ 6-9:*

Մ. Խրիմյանին հաջորդած Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանը (1874-1884 թթ.) բացառիկ համակրանք և ժողովրդականություն վայելող այն հայրենասեր եկեղեցականներից էր, որն իր խորաթափանցությամբ, հեռատեսությամբ և անհողդողդ կամքով մեծ դեր ունեցավ արևմտահայության կյանքում: Իր պատ- րիարքության հենց սկզբից Ն. Վարժապետյանը ձեռնամուխ է լինում արևմտահայ Ազգային ժողովն աշխատունակ դարձնելու գործընթացին: Ն. Վարժապետյանն ակտիվ գործունեություն է ծավալում նաև Հայկական հարցի բարձրացման շրջանում, ինչն էլ ավելի հեղինակավոր և հայտնի է դարձնում նրան: Եվ պատահական չէր, որ 1884 թվականին նա Էջմիածնում ընտրվում է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն վատառողջ լինելու պատճառով հրաժարվում է զբաղեցնել այդ բարձրաստիճան հոգևոր պաշտոնը: Մեծ է Ն. Վարժապետյանի ներդրումը նաև կրթության ոլորտում: Նրա օրհնությամբ և համաձայնությամբ ստեղծվում է «Միացյալ ընկերություն հայոց»-ը, որը, ունենալով հսկայական դրամագլուխ, կարողանում է գավառներում կրթօջախներ, արհեստանոցներ, ընթերցասրահներ, գրադարաններ բացել:

Ն. Վարժապետյանին հաջորդած Հարություն Վեհապետյանը և ապա Խորեն Աշըգյանը հայտնի էին որպես «սուլթանասեր» պատ- րիարքներ: Նրանք իրենց պատրիարքության շրջանում խուսափում են Ազգային ժողովում արևմտահայության համար կենսական խնդիրներ բարձրացնելուց: Այդ մասին են վկայում Ազգային ժողովի ատենագրությունները: Բացի այդ, Ազգային ժողովի աշխատանքներն աստիճանաբար սկսում են կազմալուծվել, իսկ 1892 թ. թուր- քական իշխանությունները նույնիսկ արգելում են տոնել սահմա-նադրության տարեդարձը, որով էլ ավելի են սեղմվում մի քանի տասնյակ տարիներ գոյություն ունեցող ազգային այս հաստատության առանց այն էլ սահմանափակ իրավունքները:

Եվրոպայում այդ օրերին ծավալված հայանպաստ շարժումից վախեցած Համիդը սկսում է սիրաշահել հայերին և թույլատրում է Ազգային ժողով գումարել նոր պատրիարք ընտրելու համար[3]: 1894 թ. Կ. Պոլսի պատրիարքական գահին է բազմում Մատթեոս եպ. Իզմիրլյանը, որն իր ազգասիրությամբ, անվեհեր հայրենասիրությամբ ու անկեղծությամբ կրկին ունկնդիր էր լինելու իր ազգի ցա- վերին: Սակայն Մ. Իզմիրլյանի պատրիարքության մեկ ու կես տարիներն ընդգրկում են համիդյան բռնապետության ամենածանր ժամանակահատվածը: «Համիդի շրջանին հինգ պատրիարքներ նստած են Պոլսոյ Պատրիարքական Աթոռին վրա, ու հինգին ալ կեցուածքը տարբեր է եղած դէպի Համիդ,- գրում է Հ. Սիրունին,- Ն. Վարժա-պետեանի օրով Համիդի մէջ գազանը դեռ չէր հասունցած... Հ. Վեհապետեանի մօտ չորս տարուան պատրիարքութեան շրջանը շատ առիթներ չունեցաւ Համիդի կատաղութիւնը ճաշակելու: ...Խ. Աշըգեան երբ Աթոռ եկաւ,

[3] **Ամառեան Հ.,** *Տաճկահայոց հարցի պատմութիւնը, Նոր-Նախիջևան, 1915, էջ 24:*

Համիդ արդեն մտած էր նօպաներու շրջանը:... Մ. Իզմիրլեանին վիճակուած էր ճաշակել լեղին»[4]:

Մ. Իզմիրլյանի՝ Համիդի նկատմամբ «խրոխտ կեցվածքը» դուր չէր գալիս հայ էֆենդիներին, որոնք փորձում են ստիպել նրան փոխել իր քաղաքական ընթացքը: Հոգնած և ձանձրացած այդ ամենից՝ պատրիարքը հրաժարական է ներկայացնում: Իզմիրլյանի պատրիարքական գործունեությունը ժամանակակիցների կողմից արժանացել է տարաբնույթ, երբեմն էլ իրարամերժ գնահատականների: Որպես կանոն՝ պատրիարքների և ընդհանրապես հայ հասարակական-քաղաքական և հոգևոր գործիչների գործունեությունն արժևորվել է՝ ելնելով նրանց՝ Համիդի նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Ոմանց համար Իզմիրլյանը հաստատամիտ «երկաթյա պատրիարք» էր, սկզբունքային և իրավունքի պաշտպան, ոմանց համար էլ անհեռատես և կամակոր պաշտոնակալ: Փաստն այն է, որ այդ ծանր օրերին Մ. Իզմիրլյանը որդեգրեց «խրոխտ մնալ գազանին առջև» մարտավարությունը:

Ինչպես արդեն նշվել է, Ազգային ժողովի հոգևոր գործառույթներից էր նաև Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության մասնակցությունը, որն ամրագրված էր սահմանադրության 60-րդ հոդվածով: Սակայն սույն հոդվածը հակասում էր 1836 թ. մարտի 11-ին ռուսաց Նիկոլայ Ա կայսեր ընդունած կանոնադրությանը (պատմության մեջ հայտնի է «Պոլոժենիե» անունով), որով պետք է առաջնորդվեր Հայոց եկեղեցին ռուսական կայսրության տարածքում: «Պոլոժենիեի» 13-րդ հոդվածը պահանջում էր, որ յուրաքանչյուր թեմ աշխարհիկ և հոգևոր մեկական պատգամավոր ուղարկի էջմիածին՝ կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար: Նման ընտրակարգը չէր կարող ընդունվել արևմտահայության կողմից: Այդ իսկ պատճառով նրանք «Պոլոժենիեն» անվանում են ազգակործան օրենք[5]:

Ռուսաստանում պատրիարքական իշխանության ենթարկումը աշխարհիկ իշխանությանը տեղի էր ունեցել դեռևս Պետրոս Ա կայսեր կառավարման ժամանակ (1720 թ.): Ռուսաց պատրիարքներին այնուհետև ոչ թե ընտրում, այլ նշանակում էր ցարը[6]: Համադրելով Ռուսաստանում պատրիարքների՝ ցարի կողմից ուղղակիորեն նշանակվելու հանգամանքը և «Պոլոժենիեի» սկզբունքները՝ դժվար չէ նկատել, որ ցարն ընդամենը միջամտում էր Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունների գործընթացին և երկու առավելագույն քվեներ ստացած հոգևորականներից մեկին հռչակում կաթողիկոս՝ հետևելով նրա գործունեությանը: Կաթողիկոսի ընտրության հարցը հայության կենսական խնդիրներից էր, և սահմանադրական շրջանում արևմտահայությունն այդ ընտրություններին մասնակցում էր ամեն անգամ տարբեր ձևով, իսկ վերջնական ընտրական համակարգ մշակելու շուրջ համաձայ-

---

[4] **Սիրունի Յ. Ճ.,** *Օրմանեան և իր ժամանակը, էջմիածին, թիվ Է, 1961, էջ 44:*

[5] *Տե՛ս Ծիլն Աւարայրի, 1866, թիվ Ա, էջ 16:*

[6] *Տե՛ս Славянская энциклопедия, т. 2, М., 2001, с. 111.*

նություն ձեռք բերել այդպես էլ չի հաջողվում: Միայն 1891 թ. թուրքական կառավարության կողմից Ազգային ժողովի նիստերի հրավիրման արգելումը մոռացության է տալիս մեծ վեճը, և Մակար կաթողիկոսի մահից հետո (1892 թ.) արևմտահայությունն առաջին անգամ կաթողիկոսական ընտրություններին մասնակցում է «Պոլոժենիեի» սկզբունքներով:

Ազգային ժողովը երկար տարիներ զբաղվում է նաև Երուսաղեմի միաբանության և ազգային իշխանությունների միջև առաջացած հակասությունների պարզաբանմամբ և դրանց կանոնակարգմամբ: Երուսաղեմի խնդիրը ծագում է Հովհաննես Զմյուռնացի պատրիարքի մահից հետո (1860 թ.), երբ միաբանությունը հրաժարվում է Ազգային ժողովի պատրաստած կանոնադրությունն ընդունել և «դուրսէն» պատրիարք ընտրել՝ սկիզբ դնելով «ներսէն-դուրսէն» պայքարին: Այդ պայքարն ավարտվում է, փաստորեն, «ներսէնականների» հաղթանակով և Եսայի վարդ. Կարապետյանի Երուսաղեմի պատրիարք ընտրվելով (1864 թ.): Միաբանության և Կ. Պոլսի պատրիարքության հարաբերությունները կանոնակարգելու և հետագայում խռովություններից խուսափելու համար Ազգային ժողովն ընդունում է Երուսաղեմի միաբանության կանոնագիրը (1865 թ. մարտի 19-ին), որում հստակեցվում էին միաբանության ընդհանուր ժողովի գործառնությունները, պատրիարքի ընտրության կարգը, միաբանների իրավունքներն ու պարտականությունները: Սույն կանոնագիրը բարեփոխվում է 1887 թվականին: Նման անհրաժեշտությունը թելադրված էր միաբանության ֆինանսական ծանր ճգնաժամով, որի հետեվանքով կուտակվել էր մեծ քանակությամբ պարտք: Դրանց մի որոշ մասը վճարելու համար վաճառքի էին հանվել առանձին սրբավայրեր, իսկ մի մասն էլ հանգանակությամբ էր հավաքվել: Նոր կանոնագրում բարեփոխվել էին պատրիարքական իշխանությանը վերաբերող հոդվածները, հանվել էին կանոնագիրը վերաքննելու և պատրիարքին պաշտոնանկ անելու հոդվածները, սահ-մանափակվել փոխառություններ վերցնելու միաբանության իրավունքները՝ ապագայում նոր պարտքերից խուսափելու և սրբավայրերի անձեռնմխելիությունը պահպանելու համար:

Աղթամարի կաթողիկոսության խնդիրն Ազգային ժողովի օրակարգ է ներառվում, երբ վիճակային եկեղեցական ժողովը որոշում է ընդունում Աղթամարի Խաչատուր և Կիլիկիայի Նիկողայոս եպիսկոպոսներին կաթողիկոսներ չճանաչելու մասին (1866 թ. հուլիսի 22-ին), քանի որ նրանք իրենց պաշտոնը ստանձնել էին ապօրինի ճանապարհով: Կիլիկիայի կաթողիկոսական գահը 1731-1865 թթ. դարձել էր Աջապահյան տոհմի մենաշնորհը՝ տալով Աթոռին ժառանգական բնույթ: Սակայն Կիրակոս Բ (1855-1865 թթ.) կաթողիկոսի մահից հետո Աջապահյան տոհմից նոր կաթողիկոս չի ընտրվում, քանի որ Կ. Պոլսի պատրիարքը դեմ էր նման ժառանգական դրությանը և ցանկանում էր նոր կաթողիկոսին ընտրել Ազգային սահմանադրության սկզբունքներին համապատասխան: Դրա հետևանքով Կիրակոս Բ-ի մահից հետո հայությունը բաժանվում է երկու «կուսակցությունների»,

որոնցից մեկը ցանկանում էր առանց պատրիարքարանի միջամտության Նիկողայոս եպիսկոպոսին կաթողիկոս դարձնել, իսկ երկրորդները, ընդհակառակը, կողմ էին պատրիարքարանի վերահսկողությամբ կաթողիկոսական ընտրություններ անցկացնելուն: Միսն ալեկոծող խռովությունները հաջողվում է դադարեցնել միայն թուրքական կառավարության միջամտությամբ (1871 թ. օգոստոսի 14-ին)՝ կաթողիկոսական գահը զավթած Նիկողայոս եպիսկոպոսին Արմաշի վանք աքսորելով: Իր հերթին Կիլիկիայի նորընտիր Մկրտիչ Քեֆսիզյան կաթողիկոսը, չենթարկվելով Ազգային ժողովի ընդունած որոշումներին, լքում է Միսը՝ չցանկանալով գործել սահմանադրության սկզբունքների համաձայն և նպատակ ունենալով Կիլիկիայի կաթողիկոսությունն ազգային միությունից առանձնացնել՝ չճանաչելով նաև Էջմիածնի կաթողիկոսի գերագահությունը: Աղթամարի եպիսկոպոս Խաչատուր Շիրոյանի անօրինական կաթողիկոս դառնալու հարցը նույնպես տասնյակ տարիներ Ազգային ժողովի օրակարգում էր: Խ. Շիրոյանը կաթողիկոս Պետրոս Բյուլբյուլի կենդանության օրոք իրեն օծել էր կաթողիկոս, ապա վարձու մարդասպանի միջոցով սպանել տվել վերջինիս: Այդ կնճիռը լուծելու համար կրկին միջամտում է Բ. Դուռը՝ Խաչատուր Շիրոյանին «ներողագիր» շնորհելով: Վերջինս շարունակում է իր ազգադավ գործունեությունը դեռ երկար տարիներ, իսկ նրա մահից հետո (1895 թ.) Աղթամարի կաթողիկոսական աթոռը թափուր է մնում: Սկզբում այն հանձնվում է Վանի նախկին առաջնորդական տեղապահ Արսեն վարդ. Մարգարյանին՝ կաթողիկոսական փոխանորդի տիտղոսով, այնուհետև Կ. Պոլսի պատրիարքարանի վերահսկողության ներքո կազմված տնօրեն խորհրդին:

Այսպիսով, Ազգային ժողովի գործունեությունից ակնկալվող փոփոխություններն իրավական առումով չկատարվեցին: Գործնականում լուծում չստացան Կիլիկիայի և Աղթամարի կաթողիկոսությունների շուրջ ծայր առած խնդիրները, իսկ Երուսաղեմի միաբանությանը պատկանող սրբավայրերի ամբողջականության պահպանմանն ուղղված միջոցառումները չտվեցին սպասված արդյունքը: Տեղի հոգևորականների անձնական շահադիտության փառասիրության պատճառով չճշգրտվեցին նույնիսկ Ազգային վարչության հետ այդ կառույցների հարաբերությունները: Ավելին, հակամարտություններն ազգային իշխանությունների և թեմականների միջև վերածվեցին մի անիմաստ պայքարի, որի հետևանքով տուժեց տեղի հայությունը:

ДУХОВНЫЕ ФУНКЦИИ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ ЗАПАДНЫХ АРМЯН

НУРБЕКЯН Л. З.

Резюме

Согласно национальной конституции западных армян, утвержденной в 1863 году, Национальное собрание являлось органом законодательной власти. Оно определяло направленность вопросов, имеющих национальную значимость. Велика была также роль константинопольских патриархов в решении общенациональных проблем.